Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-910-20.05.2010-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կազմակերպման և գործունեության իրավական հիմքերը, դրանց երաշխիքները, պետական մարմինների, գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն գործունեության սուբյեկտների և մասնակիցների հետ նրա փոխհարաբերության հիմնական սկզբունքները և ուղղված է Հայաստանի Հանրապետության գիտական ներուժի պահպանմանը, հիմնարար ու կիրառական գիտության զարգացմանը՝ որպես գիտատեխնիկական առաջընթացի, հանրապետության տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման հիմքի:

Հոդված 2. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա (ՀՀ ԳԱԱ) – Հայաստանի Հանրապետության հատուկ կարգավիճակ ունեցող ինքնակառավարվող բարձրագույն գիտական կազմակերպություն:
2. Ակադեմիկոսի և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամի տիտղոսներ՝ ՀՀ ԳԱԱ բարձրագույն գիտական կոչումներ, որոնք շնորհվում են միայն ՀՀ ԳԱԱ-ի կողմից:
3. ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ. - Հայաստանի կամ օտարերկրացի ճանաչված գիտնական, հասարակական գործիչ, ով նպաստում է ՀՀ ԳԱԱ-ի գործունեությանը:
4. ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ. – Իր գործունեությամբ Հայաստանի հետ կապված գիտական ակնառու արդյունքներ ունեցող, աշխարհում ճանաչված գիտնական:
5. ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողով. – ՀՀ ԳԱԱ կառավարման բարձրագույն մարմին
6. ՀՀ ԳԱԱ նախագահություն. – ՀՀ ԳԱԱ ընթացիկ կառավարումը իրականացնող մարմին:
7. ՀՀ ԳԱԱ նախագահ. – ՀՀ ԳԱԱ կառավարումը իրականացնող մարմին:
8. ՀՀ ԳԱԱ բաժանմունք. – Գիտության միևնույն բնագավառում գործող ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների, թղթակից անդամների և արտասահմանյան անդամների, գիտաշխատողների և գիտական կազմակերպությունների միավորում:
9. ՀՀ ԳԱԱ աշխատակազմ. – Իրականացնում է ՀՀ ԳԱԱ կառավարման մարմինների որոշումներով պայմանավորված գործառույթները:
10. Պատվովճար. – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներին և թղթակից անդամներին տրամադրվող վճար, որի չափը որոշում է ՀՀ կառավարությունը:
11. ՀՀ ԳԱԱ գիտական և գիտատեխնոլոգիական կազմակերպություն. – ՀՀ ԳԱԱ համակարգում գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ իրականացնող կազմակերպություն:

Հոդված 3. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կարգավիճակը

1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա) Հայաստանի Հանրապետության հիմնադրած՝ հատուկ կարգավիճակ ունեցող, ինքնակառավարվող բարձրագույն գիտական կազմակերպություն է, որը կազմակերպում, իրականացնում և համակարգում է գիտելիքի վրա հիմնված տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման համար անհրաժեշտ հիմնարար և կիրառական հետազոտությունները:

2. Ակադեմիան իրավաբանական անձ հանդիսացող ոչ առևտրային կազմակերպություն է, որի կազմակերպական-իրավական ձևի և կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով:

3. Ակադեմիան գործում է սույն օրենքի, Հայաստանի Հանրապետության օրենսդրության, միջազգային պայմանագրերի, ինչպես նաև իր կանոնադրության հիման վրա:

4. Ակադեմիայի լրիվ անվանումն է «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա»:

5. Ակադեմիան իրեն վերապահված խնդիրների լուծման համար կարող է կատարել լիազորված պետական կառավարման մարմնի առանձին գործառույթներ՝ իրականացնել իր համակարգի գիտական կազմակերպությունների, իրավաբանական անձանց և հիմնարկների ընդհանուր կառավարումը՝ ապահովելով նրանց բնականոն գործունեությունը:

6. Ակադեմիան ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք և իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ձևավորման ժամանակ Ակադեմիայի և իր համակարգի բազային ֆինանսավորման չափը նշվում է առանձին տողով, իսկ պետական բյուջեից Ակադեմիայի ֆինանսավորումը գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ), նպատակային-ծրագրային ձևերով իրականացվում է կառավարության կողմից հաստատած կարգով:

8. Ակադեմիան ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

9. Ակադեմիան ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

Հոդված 4. Ակադեմիայի կարգավիճակի առանձնահատկությունները

1. Ակադեմիայի հատուկ կարգավիճակի առանձնահատկություններն են՝

1) Ակադեմիան անմիջականորեն ենթարկվում է կառավարությանը.

2) Ակադեմիայի նախագահը մասնակցում է կառավարության նիստերին.

3) Ակադեմիան գիտական գործունեության գծով կառավարության պաշտոնական խորհրդատուն է, որի առաջարկները քննարկում են կառավարությունը և պետական կառավարման համապատասխան մարմինները:

2. Ակադեմիան կառավարության սահմանած կարգով իրականացնում է գիտության բնագավառում նորմատիվ իրավական ակտերի փորձաքննություն:

Հոդված 5. Ակադեմիայի պատասխանատվությունը

1. Ակադեմիան իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով:

2. Ակադեմիան պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

Հոդված 6. Ակադեմիայի ստեղծումը և պետական գրանցումը

1.Ակադեմիայի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս կառավարության:

2.Հիմնադրի որոշմամբ սահմանվում են Ակադեմիայի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները, նրան սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմն ու արժեքը, ինչպես նաև օրենքին չհակասող այլ դրույթներ:

3. Ակադեմիան ենթակա է պետական գրանցման՝ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 7. Ակադեմիայի հիմնադրի բացառիկ լիազորությունները

Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1. Ակադեմիայի կանոնադրության, կառուցվածքի հաստատումը և դրանցում լրացումներ և փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կանոնադրության նոր խմբագրությամբ հաստատելը.
2. Ակադեմիայի կառավարման համակարգի սահմանումը.
3. Ակադեմիայի վերակազմակերպումը և լուծարումը.

Հոդված 8. Ակադեմիայի կանոնադրությունը

1. Ակադեմիայի հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է, որը հաստատու և փոփոխում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ակադեմիայի ընդհանուր ժողովի առաջարկությամբ: Ակադեմիայի կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են նույն կարգով:

2. Ակադեմիայի կանոնադրությունը ներառում է՝

1) Ակադեմիայի անվանումը.

2) Ակադեմիայի նախագահության գտնվելու վայրը.

3) Ակադեմիայի գործունեության առարկան և նպատակները, ներառյալ՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները.

4) Ակադեմիայի կառավարման մարմինները, դրանց կազմը և լիազորությունները.

5) Ակադեմիայի սեփականության ձևավորման, տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը.

6) Ակադեմիայի շահույթի օգտագործման կարգը:

Հոդված 9. Ակադեմիայի խնդիրները և գործունեության հիմնական ուղղությունները

1. Ակադեմիայի խնդիրներն են՝

1) Հայաստանի տնտեսական, սոցիալական, պետական և իրավական համակարգի զարգացման, մշակույթի, բնության ռացիոնալ (բանական) օգտագործման և պահպանության գիտական ապահովումը.

2) Հայագիտական, ֆիզիկամաթեմատիկական, բնական, տեխնիկական, հումանիտար և սոցիալական գիտությունների կարևորագույն ուղղություններով հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների և մշակումների կազմակերպումը և համակարգումը.

3) լիազորված պետական մարմինների հետ հանրապետության հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների գերակա ուղղությունների ցանկերի առաջարկումը, գիտական և գիտատեխնիկական գործունեության կատարելագործմանն առնչվող օրենսդրության վերաբերյալ սահմանված կարգով ՀՀ կառավարությանը առաջարկությունների ներկայացումը.

4) գիտատեխնիկական առաջընթացի սկզբունքորեն նոր ուղիների բացահայտումը, մասնակցությունը հայրենական և համաշխարհային գիտության նվաճումների գործնական կիրառման համար առաջարկությունների մշակմանը.

5) գիտական դպրոցների զարգացման, բարձր որակավորման գիտական աշխատողների պատրաստման, գիտնականների և մասնագետների որակավորման բարձրացման համար (այդ թվում՝ արտասահմանյան գիտական կենտրոններում) պայմանների ստեղծումը.

6) գիտատեխնիկական տեղեկատվական համակարգի զարգացման ապահովումը.

7) միջազգային գիտական համագործակցության զարգացման համար պայմանների ստեղծումը:

2. Ակադեմիայի գործունեության հիմնական ուղղություններն են՝

1) գիտատեխնիկական ոլորտում առկա վիճակի վերլուծության անցկացումը և հետագա զարգացման միտումների վերաբերյալ կանխատեսումների մշակումը.

2) հայագիտական, ֆիզիկամաթեմատիկական, բնական, տեխնիկական, հումանիտար և սոցիալական գիտությունների հիմնախնդիրների գծով գիտական և գիտատեխնիկական խորհուրդների, փորձագիտական խմբերի, հանձնաժողովների ստեղծումը.

3) գիտական և գիտատեխնիկական գործունեության կատարելագործմանը առնչվող օրենսդրության վերաբերյալ ՀՀ կառավարությանը առաջարկությունների ներկայացումը.

4) Ակադեմիայի համակարգի գիտական կազմակերպությունների և այլ կառուցվածքային օղակների գործունեության հիմնական ուղղությունների սահմանումը.

5) բարձր որակավորման գիտական և գիտամանկավարժական (ներառյալ՝ մագիստրական) կադրերի պատրաստումը. պետական լիազորված մարմնի սահանած կարգով կառավարություն ներկայացվող գիտության հետ առնչվող փաստաթղթերի նախագծերի, գիտական, գիտատեխնիկական և տնտեսական ծրագրերի, ինովացիոն նախագծերի գիտական փորձաքննության անցկացումը.

6) Ակադեմիայի գիտատեխնիկական ներուժի զարգացման, նյութատեխնիկական բազայի ամրապնդման, գիտատար և բարձր տեխնոլոգիական գիտատեխնիկական արտադրանքի փորձնական արտադրության կազմակերպման ապահովումը, ինչպես նաև հետազոտման նոր միջոցների և մեթոդների ստեղծումը և տարածումը.

7) Ակադեմիայի համակարգի գիտական կազմակերպությունների և այլ կառուցվածքային օղակների զարգացմանն ուղղված կապիտալ ներդրումային ծրագրերի նախագծերի մշակումը և սահմանված կարգով ներկայացումը.

8) միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցության իրականացումը, արտասահմանյան երկրների գիտությունների ակադեմիաների և գիտական այլ կազմակերպությունների հետ փոխշահավետ կապերի զարգացումը, միջպետական գիտական և գիտատեխնիկական ծրագրերի և նախագծերի կատարումը, մասնակցությունը միջազգային գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների և ասոցիացիաների գործունեությանը.

9) Ակադեմիայի համակարգի գիտական կազմակերպություններում իրականացվող հիմնարար և կիրառական հետազոտություններում օտարերկրյա (այդ թվում՝ սփյուռքահայ) գիտական ներուժի մասնակցության ապահովումը.

10) կրթական համակարգի գիտական մակարդակի բարձրացմանը, բարձրագույն կրթությունն ապահովող հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացմանը, կրթական ծրագրերի և ձեռնարկների ստեղծմանն աջակցելը.

11) գիտելիքների քարոզչությունը և տարածումը և հրատարակչական գործունեությունը.

12) Ակադեմիայի համակարգում, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով համատեղ գիտական, գիտակրթական և գիտաարտադրական կենտրոնների ստեղծումը.

13) գիտատեխնիկական տեղեկատվության սեփական ռեսուրսների ստեղծումն ու զարգացումը, այդ թվում՝ տարածումը հայրենական և միջազգային տեղեկատվական համակարգչային ցանցերում.

14) գիտական նստաշրջանների, գիտաժողովների, սեմինարների և խորհրդակցությունների կազմակերպումը և անցկացումը, ինչպես նաև մասնակցությունը նմանատիպ այլ միջոցառումներին:

Հոդված 10. Ակադեմիայի իրավունքներն ու պարտականությունները իր համակարգի կազմակերպությունների նկատմամբ

1. Ակադեմիան իր կառավարման մարմինների միջոցով իրականացնում է իր համակարգի կազմակերպությունների ընդհանուր կառավարումը, ապահովում է դրանց բնականոն գործունեությունը:

2. Ակադեմիան՝

1) կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է դրանց կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

2) իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

3) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.

4) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

5) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, եթե կազմակերպությունը չունի կոլեգիալ կառավարման մարմին.

6) իրականացնում է սույն օրենքով, հիմնադրի որոշումներով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

ԳԼՈՒԽ 2
ՀՀ ԳԱԱ-Ի ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԿԱԶՄԸ

Հոդված 11. Ակադեմայի համակարգը

1. Ակադեմիան իր կազմում միավորում է Ակադեմիայի ակադեմիկոսներին (իսկական անդամներին), թղթակից անդամներին, Ակադեմիայի պատվավոր և արտասահմանյան անդամներին, ինչպես նաև Ակադեմիայի բաժանմունքները, Ակադեմիայի աշխատակազմը և Ակադեմիայի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հիմնադրած կազմակերպությունները:

2.Ակադեմիայի համակարգում ներառված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 12. Ակադեմիայի անդամները

1.Ակադեմիան շնորհում է ակադեմիական գիտական տիտղոսները՝ Ակադեմիայի ակադեմիկոս (կամ Ակադեմիայի իսկական անդամ), Ակադեմիայի թղթակից անդամ, Ակադեմիայի պատվավոր անդամ, Ակադեմիայի արտասահմանյան անդամ, Ակադեմիայի պատվավոր դոկտորի աստիճան: Ակադեմիայի ակադեմիական գիտական տիտղոսները շնորհվում են ցմահ:

2.Ակադեմիայի գիտական տիտղոսները ամրագրվում են դիպլոմներով:

Ակադեմիայի գիտական տիտղոսների շնորհումն իրականացվում է Ակադեմիայի կանոնադրության համաձայն անցկացվող ընտրությունների արդյունքներով: Ակադեմիայի ակադեմիկոսներին և թղթակից անդամներին տրամադրվում է ցմահ պատվովճար, որի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Պատվովճարը տրամադրվում է Ակադեմիայի այն անդամներին, որոնք ապրում և աշխատում են Հայաստանի Հանրապետությունում կամ ծառայողական գործուղման են մեկնել արտասահման մինչև երեք ամիս ժամանակով:

3.Ակադեմիայի ակադեմիկոսների, թղթակից անդամների, պատվավոր, արտասահմանյան անդամների և պատվավոր դոկտորների ընտրությունների կարգը, նրանց իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Ակադեմիայի կանոնադրությամբ:

4.Ակադեմիայի իսկական և թղթակից անդամների առավելագույն թիվը և մասնագիտությունները սահամանում է ՀՀ կառավարությունը՝ Ակադեմիայի նախագահության առաջարկությամբ: Ակադեմիայի իսկական և թղթակից անդամների ընտրություններն անցկացվում են որպես կանոն 3 տարին մեկ անգամ:

Հոդված 13. Ակադեմիայի գիտական, գիտատեխնոլոգիական կազմակերպությունները

1. Ակադեմիայի համակարգում գործում են գիտական, գիտատեխնոլոգիական կազմակերպություններ, հրատարակչություն, գրադարաններ և հիմնարկներ:

2. Ակադեմիայի գիտական և գիտատեխնոլոգիական կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության հիմնադրած պետական ոչ առևտրային կազմակերպություններ են, որոնց կառավարումը լիազորված է իրականացնել Ակադեմիան:

3. Ակադեմիայի գիտական և գիտատեխնոլոգիական կազմակերպությունների ստեղծումն ու կառավարումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Ակադեմիայի կանոնադրությամբ, ինչպես նաև այդ կազմակերպությունների կանոնադրություններով սահմանված կարգով:

4. Ակադեմիայի համակարգի գիտական կազմակերպությունները օրենքով սահմանված կարգով կարող են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

5. Ակադեմիայի կողմից օտարերկրյա պետություններում գիտական կազմակերպությունների ստեղծումն իրականացվում է հիմնադրի որոշմամբ՝ տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

6. Ակադեմիայի հիմնարկների հիմնադիրը Ակադեմիան է:

Հոդված 14. Ակադեմիայի բաժանմունքները

1.Գիտության միևնույն բնագավառում գործող Ակադեմիայի ակադեմիկոսները, թղթակից և արտասահմանյան անդամները, գիտաշխատողները և գիտական կազմակերպությունները միավորվում են Ակադեմիայի բաժանմունքներում:

2.Ակադեմիայի բաժանմունքների գիտական գործունեության հիմնական ուղղությունները սահմանվում են Ակադեմիայի կանոնադրությամբ:

3.Ակադեմիայի բաժանմունքը պատասխանատվություն է կրում տվյալ բնագավառում կատարվող աշխատանքների կազմակերպան, գիտական ծրագրերի պատրաստման և կատարված աշխատանքների որակի համար:

4.Ակադեմիայի բաժանմունքը ղեկավարում է բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարը, որի ընտրության կարգը սահմանվում է Ակադեմիայի կանոնադրությամբ:

Հոդված 15. Ակադեմիայի աշխատակազմը

1.Ակադեմիայի աշխատակազմը ստեղծվում է Ակադեմիայի կառավարման մարմիններին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման և ապահովման նպատակով:

2.Ակադեմիայի աշխատակազմի կառուցվածքը և իրավասությունները որոշվում են Ակադեմիայի նախագահության հաստատած կանոնակարգով:

ԳԼՈՒԽ 3
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հոդված 16. Ակադեմիայի կառավարման մարմինները

1. Ակադեմիայի կառավարման մարմիններն են Ակադեմիայի ընդհանուր ժողովը. Ակադեմիայի նախագահությունը և Ակադեմիայի նախագահը:

2. Ակադեմիայի կառավարման կարգը սահմանվում է սույն օրենքով, Ակադեմիայի կանոնադրությամբ:

Հոդված 17. Ակադեմիայի ընդհանուր ժողովը

1.Ակադեմիայի ընդհանուր ժողովը Ակադեմիայի կոլեգիալ կառավարման բարձրագույն մարմինն է, որի լիազորությունները սահմանվում են Ակադեմիայի կանոնադրությամբ:

2.Ակադեմիայի ընդհանուր ժողովում ընդգրկվում են Ակադեմիայի նախագահը, Ակադեմիայի նախագահության անդամները, Ակադեմիայի ակադեմիկոսները և թղթակից անդամները, Ակադեմիայի գիտական կազմակերպությունների ներկայացուցիչները:

3.Ակադեմիայի ընդհանուր ժողովում գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների թիվը, ընտրության կարգը և ընդհանուր ժողովի աշխատանքներին նրանց մասնակցության առանձնահատկությունները սահմանվում են Ակադեմիայի կանոնադրությամբ:

4.Ակադեմիայի պատվավոր և արտասահմանյան անդամները կարող են մասնակցել ընդհանուր ժողովի աշխատանքներին՝ առանց ընտրելու և ընտրվելու իրավունքի:

Հոդված 18. Ակադեմիայի նախագահը

1. Ակադեմիայի նախագահը ղեկավարում է Ակադեմիայի գործունեությունը՝ իր իրավասության սահմաններում և Ակադեմիայի կանոնադրությանը համապատասխան: Նա ապահովում է Ակադեմիայի բնականոն գործունեությունը:

2. Ակադեմիայի նախագահի լիազորությունները որոշվում են Ակադեմիայի կանոնադրությամբ:

3. Ակադեմիայի նախագահը, համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Ակադեմիայի կանոնադրությամբ սահմանված կարգով, տնօրինում է Ակադեմիային պատկանող գույքը՝ այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

4. Ակադեմիայի նախագահը ընտրվում է Ակադեմիայի ընդհանուր ժողովի կողմից, Ակադեմիայի ակադեմիկոսների թվից փակ գաղտնի քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ 5 տարի ժամանակով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Ակադեմիայի նախագահ:

Հոդված 19. Ակադեմիայի նախագահությունը

1. Ակադեմիայի նախագահությունը իրականացնում է Ակադեմիայի ընթացիկ կառավարումը և հաշվետու է Ակադեմիայի ընդհանուր ժողովին: Ակադեմիայի նախագահության լիազորությունները որոշվում են Ակադեմիայի կանոնադրությամբ:

2. Ակադեմիայի նախագահությունը գլխավորում է Ակադեմիայի նախագահը:

3. Ակադեմիայի փոխնախագահը և ակադեմիկոս քարտուղարը ընտրվում են Ակադեմիայի ակադեմիկոսների և թղթակից անդամների թվից Ակադեմիայի ընդհանուր ժողովի կողմից փակ գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժակետով, ձայների պարզ մեծամասնությամբ:

4. Ակադեմիայի նախագահությունը կազմված է ի պաշտոնե և ընտրովի անդամներից: Ի պաշտոնե Ակադեմիայի նախագահության անդամ են Ակադեմիայի նախագահը, փոխնախագահներտ ադեմիկոս քարտուղարը, Ակադեմիայի բաժանմունքների ակադեմիկոս քարտուղարները, Ակադեմիայի ընդհանուր ժողովում այդ պաշտոնում հաստատվելուց հետո:

Ակադեմիայի նախագահության մյուս բոլոր անդամները ընտրվում են Ակադեմիայի ընդհանուր ժողովում Ակադեմիայի ակադեմիկոսներից և թղթակից անդամներից՝ 5 տարի ժամկետով՝ փակ (գաղտնի) քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ Ակադեմիայի կանոնադրությամբ սահմանված կարգով:

5. Բուհերի, տնտեսության ճյուղերի, ինչպես նաև պետական կառավարման մարմինների ներկայացուցիչները կարող են հրավիրվել մասնակցելու Ակադեմիայի նախագահության նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

Գ Լ Ո Ւ Խ 4
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Հոդված 20. Ակադեմիայի գույքի կազմը

1. Ակադեմիային պատկանող գույքը բաղկացած է նրա սեփականությունը համարվող գույքից և գիտական գործունեությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նրան անժամկետ, անհատույց օգտագործման համար ամրացված գույքից:

2. Ակադեմիային ամրագրված գույքի (այդ թվում՝ բյուջետային միջոցների), ինչպես նաև սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոդված 21. Ակադեմիայի սեփականությունը

1. Ակադեմիայի սեփականությունը ձևավորվում է նրա հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև գործունեության ընթացքում ստեղծված և ձեռք բերված գույքից:

2. Ակադեմիային սեփականության իրավունքով պատկանող շարժական և անշարժ գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ լուծարումից հետո մնացած գույքի:

3. Ակադեմիայի սեփականության պահպանման հոգսը կրում է Ակադեմիան:

Հոդված 22. Ակադեմիային ամրացված գույքը

1. Հիմնադիրը կարող է Ակադեմիային անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

2. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից Ակադեմիային ամրացված գույքը:

3. Ակադեմիան իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

Ակադեմիան իրավունք ունի իրեն ամրացված գույքը հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը 1 տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի սահմանած դեպքերի:

Ամրացված գույքի վարձակալության հանձնելու արդյունքում Ակադեմիայի ստացած կամուտներն ուղղվում են նրա կանոնադրական խնդիրների իրականացմանը:

Ակադեմիային ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

4. Հիմնադրի կողմից գույքը Ակադեմիային ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

Հոդված 23. Ակադեմիայի ֆինանսական միջոցները

1. Ակադեմիայի ֆինանսական միջոցները ձևավորվում են՝

1) Ակադեմիայի գիտական և տնտեսական գործունեությունից, այդ թվում՝ հանրապետության և արտերկրի իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ պայմանագրային աշխատանքներից, սեփական մշակումների իրացման հետ կապված գիտաարտադրական գործունեությունից ստացված եկամուտներից.

2) իրավաբանական և ֆիզիկական անձանց (այդ թվում արտասահմանյան) նվիրատվություններից, դրամաշնորհներից, ինչպես նաև կտակներից.

3) Ակադեմիայի գույքի և գույքային իրավունքից ստացած եկամուտներից.

4) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

2. Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների ներգրավումը չի կարող հանգեցնել պետական բյուջեից Ակադեմիայի ֆինանսավորման չափերի նվազեցմանը:

3. Իր ֆինանսավորման սահմաններում Ակադեմիան ինքնուրույն է որոշում իր աշխատողների թիվը, նրանց վարձատրության կարգը, ինչպես նաև հատկացվող գումարների ծախսման հիմնական ուղղությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Ակադեմիայի կանոնադրությամբ սահմանված կարգով:

4. Ակադեմիայի համակարգի կազմակերպություններին պետական բյուջեով տրամադրված ֆինանսական միջոցների հատկացումը կատարում է Ակադեմիան:

Հոդված 24. Խոշոր գործարքները

1. Խոշոր են համարվում այն գործարքները կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք կապված են Ակադեմիայի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվանը նախորդող եռամսյակում տրված հաշվապահական հաշվետվությամբ Ակադեմիային սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի 50 տոկոսից ավելին: Խոշոր չեն համարվում այն գործարքները, որոնք կատարվում են Ակադեմիայի առօրյա գործունեության ընթացքում և համարվում են նրա կանոնադրական խնդիրներից ուղղակիորեն բխող գործառույթներ:

2. Խոշոր գործարքը կատարվում է հիմնադրի համաձայնությամբ:

3. Ակադեմիայի կողմից սեփականության իրավունքով նրան պատկանող գույքի արժեքի 20-50 տոկոսը կազմող արժեքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ

օտարելու հնարավորության հետ կապված խոշոր գործարքներ կատարելու մասին որոշման ընդունումը Ակադեմիայի կանոնադրությամբ սահմանված կարգով վերապահվում է Ակադեմիայի նախագահությունը:

4. Սույն հոդվածի պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը կարող է դատական կարգով ճանաչվել անվավեր՝ Ակադեմիայի հիմնադրի կամ նրա լիազորած պետական մարմնի հայցի հիման վրա:

ԳԼՈՒԽ 5
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 25. Ակադեմիայի վերակազմակերպումը և լուծարումը

1. Ակադեմիան կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

2. Ակադեմիան լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

3. Ակադեմիան կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

4. Ակադեմիան կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

Հոդված 26. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից Հայաստանի Հանրապետության կառավարությունը որպես Ակադեմիայի հիմնադիր Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիման վրա իրականացնում է Ակադեմիայի վերակազմակերպում՝ վերակազմավորման եղանակով:

3. Ակադեմիան համարվում է վերակազմավորված նոր կանոնադրության օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

4. Ակադեմիան Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի 1943 թվականի նոյեմբերի 10-ի համար 702 որոշմամբ ստեղծված ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի իրավահաջորդը հանդիսացող Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիա պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջոր դն է:

5. Նոր կարգավիճակով գրանցված Ակադեմիային են անցնում «ՀՀ ԳԱԱ պետական ոչ առևտրային կազմակերպության» իրավունքները և պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

6. Ակադեմիայի կառավարման մարմինները շարունակում են իրենց լիազորությունների իրականացումը մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող կանոնադրությամբ սահմանված ժամկետների լրանալը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների

Առաջարկության հեղինակ	Առաջարկության բովանդակություն	Եզրակացություն
ՀՀ Կառավարություն	1. Նախագիծը լրացնել նոր 2-րդ հոդվածով «Հոդված 2. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները 1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա (ՀՀ ԳԱԱ) – Հայաստանի Հանրապետության հատուկ կարգավիճակ ունեցող ինքնակառավարվող բարձրագույն գիտական կազմակերպություն: 2. Ակադեմիկոսի և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամի տիտղոսներ՝ ՀՀ ԳԱԱ բարձրագույն գիտական կոչումներ, որոնք շնորհվում են միայն ՀՀ ԳԱԱ-ի կողմից: 3. ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ. - Հայաստանի կամ օտարերկրացի ճանաչված գիտնական, հասարակական գործիչ, ով նպաստում է ՀՀ ԳԱԱ-ի գործունեությանը: 4. ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ. – Իր գործունեությամբ Հայաստանի հետ կապված գիտական ակնառու արդյունքներ ունեցող, աշխարհում ճանաչված գիտնական: 5. ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողով. – ՀՀ ԳԱԱ կառավարման բարձրագույն մարմին 6. ՀՀ ԳԱԱ նախագահություն. – ՀՀ ԳԱԱ ընթացիկ կառավարումը իրականացնող մարմին: 7. ՀՀ ԳԱԱ նախագահ. – ՀՀ ԳԱԱ կառավարումը իրականացնող մարմին: 8. ՀՀ ԳԱԱ բաժանմունք. – Գիտության միևնույն բնագավառում գործող ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների, թղթակից անդամների և արտասահմանյան անդամների, գիտաշխատողների և գիտական կազմակերպությունների միավորում: 9. ՀՀ ԳԱԱ աշխատակազմ. – Իրականացնում է ՀՀ ԳԱԱ կառավարման մարմինների որոշումներով պայմանավորված գործառույթները: 10. Պատվովճար. – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներին և թղթակից անդամներին տրամադրվող վճար, որի չափը որոշում է ՀՀ	Ընդունվել է Այդ կապակցությամբ նախագծի հոդվածների համարակալումը փոխվել է

	կառավարությունը: 11. ՀՀ ԳԱԱ գիտական և գիտատեխնոլոգիական կազմակերպություն. – ՀՀ ԳԱԱ համակարգում գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ իրականացնող կազմակերպություն:	
	2. 2-րդ հոդվածի 5-րդ կետում «կատարում է» բառը փոխարինել «կարող է կատարել լիազորված» բառերով, իսկ «ղեկավարում» բառը՝ «կառավարում» բառով	Ընդունվել է (3-րդ հոդվածի 5-րդ կետ)
	3. 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան /այսուհետ՝ Ակադեմիա/ անմիջականորեն ենթարկվում է կառավարությանը, Ակադեմիայի նախագահը մասնակցում է կառավարության նիստերին, ինչպես նաև հանդիսանում է կառավարության պաշտոնական խորհրդատուն գիտական գործունեության գծով, որի առաջարկները պարտադիր կարգով քննարկում են կառավարությունը և պետական կառավարման համապատասխան մարմինները: Հարկ է նշել, որ վերոնշյալ նորմերը օրենքի կարգավորման առարկա չեն, քանի որ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանվել է ՀՀ Նախագահի 2007 թվականի հուլիսի 18–ի ՆՀ-174-Ն հրամանագրով:	Ընդունվել է 3-րդ հոդվածի 1–ի մասի 3-րդ կետից հանվել են «պարտադիր կարգով« բառերը (4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ)
	3. Նախագծի 6-րդ հոդվածի կետերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին: Նախագծի 6-րդ հոդվածի 1-ի մասի՝ 1. «ա» կետը հանել 2. «բ» կետում «կանոնադրության» բառից հետո լրացնել «և կառուցվածքի» բառերը: 6-րդ հոդվածով սահմանվում է հիմնադրի բացառիկ լիազորությունները, որում ներառված է նաև այն, որ հիմնադիրը իրականացնում է սույն օրենքով և Ակադեմիայի կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը: Վերոգրյալից ստացվում է, որ Ակադեմիային վերաբերող	Ընդունվել է (7-րդ հոդված) 1. Ընդունվել է (7-րդ հոդված) 2. Ընդունվել է (7-րդ հոդված) Ընդունվել է թվացյալ հակասության լուծման համար հանվել է 6-րդ հոդվածի «ե» կետը: (7-րդ հոդված)

	գրեթե բոլոր հարցերի լուծումը համարվում է հիմնադրի բացառիկ լիազորություն: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է խմբագրել 6-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը:	
	4. 7-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի «այդ թվում» բառերը փոխարինել « ներառյալ» բառով	Ընդունվել է (8-րդ հոդված)
	5. 8-րդ հոդվածի՝ 1. համարակալումը վերանայել, 2. 1-ին մասի 1-ին կետում «պետահիրավական զարգացման» հասկացությունը հստակեցման կարիք անի, 3. 1-ին մասի 3-րդ կետում «որոշումը» բառը փոխարինել «առաջարկում» բառով, 4. 2-րդ մասի 14-րդ կետից հանել «գիտական դպրոցների» բառերը	Ընդունվել է (9-րդ հոդված) Ընդունվել է (9-րդ հոդված) 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «պետահիրավական« բառը փոխարինել «պետական և իրավական համակարգի« ձևակերպումը: Ընդունվել է (9-րդ հոդված) Ընդունվել է (9-րդ հոդված)
	6. 9-րդ հոդվածի 1-ին մասով Ակադեմիան ապահովում է իր համակարգի կազմակերպությունների ընդհանուր կառավարումը և պատասխանատու է դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար: Հարկ է նկատի ունենալ, որ համաձայն վերոնշյալի Ակադեմիան պետք է նաև գույքային պատասխանատվություն կրի ենթակա կազմակերպությունների գույքային պարտավորությունների համար:	Ընդունվել է (10-րդ հոդված) առաջարկվել է 9-րդ հոդվածի 1-ին մասի՝ 1. «իր կազմում» բառերը փոխարինել «իր համակարգի» բառերով, 2. վերջում «և պատասխանատու է դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար« բառերը հանել:
	7. 10-րդ հոդվածի 2-րդ մասը անհրաժեշտ է խմբագրել սահմանելով, որ Ակադեմիայի համակարգում ներառված պետական կազմակերպությունների ցանկը կարող է սահմանվել Ակադեմիայի կառուցվածքում:	Ընդունվել է (11-րդ հոդված) 10-րդ հոդվածի 2-րդ մասում «համակարգի մեջ մտնող» բառերը փոխարինվել են «համակարգում ներառված» բառերով

	8. 11-րդ հոդվածի 1-ին կետում «հետևյալ բարձրագույն ակադեմիական աստիճանները (գիտական տիտղոսները)» բառակապակցությունը փոխարինել «ակադեմիական գիտական տիտղոսները» բառերով, իսկ նույն կետի նախավերջին տողում «դոկտոր բառը փոխարինել «դոկտորի աստիճան» բառերով	Ընդունվել է (12-րդ հոդված)
	9. 12-րդ հոդվածի՝ 1. 4-րդ մասով Ակադեմիայի համակարգի գիտական կազմակերպությունները կարող են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և սույն օրենքով սահմանված կարգով: «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՊՈԱԿ-ը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Սակայն նախագծով չեն սահմանվում ձեռնարկատիրական գործունեության տեսակները: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որպեսզի նախագծով տրվեն ձեռնարկատիրական գործունեության տեսակները, իսկ եթե չեն տրվում, ապա նախագծով սահմանվեն, որ վերոնշյալ կազմակերպությունները ձեռնարկատիրական գործունեությամբ կարող են զբաղվել նաև հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: 2. 4-րդ մասում «գործունեությամբ»բառից հետո նախադասությունը վերջացնել	Ընդունվել է (13-րդ հոդված) 4-րդ կետը խմբագրվել է Ընդունվել է
	10. 18-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությունում «մնացած բոլոր» բառերը փոխարինել «մյուս» բառով, իսկ «Ակադեմիայի նախագահի ներկայացմամբ» բառերը հանել	Ընդունվել է (19-րդ հոդված)

	11. 19-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ Ակադեմիան առանց հիմնադրի որոշման չի կարող օտարել հիմնադրի կողմից անհատույց, անժամկետ օգտագործման համար իրեն տրամադրված գույքը, սակայն հարկ է նշել, որ հիմնադրի կողմից ամրացված գույքը Ակադեմիան չի կարող օտարել նույնիսկ հիմնադրի որոշմամբ:	Ընդունվել է հանվել է 19-րդ հոդվածի 3-րդ մասն (20-րդ հոդված)
	12. 20-րդ հոդվածի 3-րդ մասի «պարտավորությունը» բառը անհրաժեշտ է փոխարինել «հոգսը» բառով, ինչպես նախատեսված է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով	Ընդունվել է «Պարտավորություն« բառը փոխարիվել է «հոգս« բառով (21-րդ հոդված)
	13. 21-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ պարբերությունում «5» թիվը փոխարինել «1» թվով	Ընդունվել է (22-րդ հոդված)
	14. 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը առաջարկում ենք խմբագրել և սահմանել, որ Ակադեմիայի ֆինանսական միջոցները ձևավորվում են Ակադեմիայի գույքի և գույքային իրավունքից ստացած եկամուտներից, այլ ոչ թե գույքային իրավունքի օգտագործումից:	Ընդունվել է 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «իրավունքի օգտագործումից« բառերը փոխարինվել է «իրավունքից» բառով (23-րդ հոդված)
	Նախագծի 25-րդ հոդվածի 2-րդ մասի անհրաժեշտությունը չկա, քանի որ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի թիվ 541-Ն որոշման համաձայն մշակվելու և սահմանված կարգով ՀՀ կառավարություն է ներկայացվելու ՀՀ վարչապետի որոշման նախագիծ, որում նախատեսվելու են նշված օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումները /այն իրավական ակտերը, որոնք պետք է ընդունվեն ի կատարումն հիշյալ օրենքի/:	Ընդունվել է 25-րդ հոդվածի 2-րդ կետը հանվել է (26-րդ հոդված)
	25-րդ հոդվածը լրացնել հետևյալ կետերով՝ «2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից Հայաստանի Հանրապետության կառավարությունը որպես Ակադեմիայի հիմնադիր Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիման վրա իրականացնում է Ակադեմիայի վերակազմակերպում՝ վերակազմավորման եղանակով: 3. Ակադեմիան համարվում է վերակազմավորված նոր կանոնադրության օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:	Ընդունվել է (26-րդ հոդված)

	4. Ակադեմիան Խորհրդային Հայաստանի Ժող-կոմխորհի 1943 թվականի նոյեմբերի 10-ի համար 702 որոշմամբ ստեղծված ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի իրավահաջորդը հանդիսացող Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիա պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդն է: 5. Նոր կարգավիճակով գրանցված Ակադեմիային են անցնում «ՀՀ ԳԱԱ պետական ոչ առևտրային կազմակերպության» իրավունքները և պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան: 6. Ակադեմիայի կառավարման մարմինները շարունակում են իրենց լիազորությունների իրականացումը մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող կանոնադրությամբ սահմանված ժամկետների լրանալը:	
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Լ.Գալստյան	1. Հոդված 2-րդ. Հստակեցնել «հատուկ կարգավիճակ» եզրը՝ այն համապատասխանեցնելով ՀՀ գործող օրենսդրությանը:	Չի ընդունվել Չի հակասում գործող օրենսդրությանը, քանի որ որպես «ՀՀ ԳԱԱ եզակի տեսակի ոչ առևտրային կազմակերպության» գոյությունը հիմնավորվում է «ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի» 51-րդ հոդվածի 4-րդ կետով (3-րդ հոդված)

	2. Հոդված 2-րդ. 7-րդ կետում ամրագրել տարեկան ՀՆԱ-ՀՀ ԳԱԱ հարաբերակցությամբ պայմանավորված ֆինանսավորում:	Չի ընդունվել Նախկինում այդ դրույթը «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում եղել և հանվել է (3-րդ հոդված)
	3. Նախագծում ամրագրել Գիտության հիմնադրամն ու նրա խնդիրները:	Չի ընդունվել քանի որ ՀՀ ԳԱԱ-ի կազմում գիտության հիմնադրամ գոյություն չունի
	4. Հոդված 3-րդ. ՀՀ ԳԱԱ կարգավիճակի առանձնահատկությունները բխեցնել ՀՀ Սահմանադրությունից:	Չի ընդուվել ՀՀ ԳԱԱ-ի կարգավիճակը բխում է «ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի» 51-րդ հոդվածի 4-րդ կետից (4-րդ հոդված)
	5. Հոդված 8-րդ. Հստակեցնել ՀՀ ԳԱԱ , Գիտության պետական կոմիտեի, գիտական կազմակերպությունների և բուհերի հարաբերություններն ու գործառույթները: Չևակերպել համակարգման իրավական երաշխիքները:	Չի ընդուվել Հստակեցման կարիք չկա, քանի որ ՀՀ ԳԿՆ-ի, Գիտպետկոմի իրավասությունների մեջ են մտնում՝ գիտատեխնիկական քաղաքկանության մշակումն ու իրականացումը, պետ.պատվերի տեղադրումն ու ֆինանսավորումը, մինչդեռ ՀՀ ԳԱԱ-ի համակարգի խնդիրը հիմնարար գիտության բնագավառում գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումն է, ինչպես նաև հանրապետությունում դրանց համակարգումը և խորհրդատվության մատուցումը (9-րդ հոդված)
	6. Հոդված 10-րդ. Սահմանել «բարձրագույն ակադեմիական գիտական» աստիճան, «գիտական տիտղոս» հասկացությունները և նախագծով ամրագրված մյուս գիտական աստիճանները:	Ընդունվել է Այս հասկացությունները սահմանվել են 2-րդ հոդվածում
	7. Սահմանել ՀՀ ԳԱԱ կառավարման մարմինների, նախագահության, ՀՀ ԳԱԱ-ի աշխատակազմի, ինչպես նաև գիտական կազմակերպությունների (գրադարան,	Ընդունվել է 12-րդ հոդվածի 1-ին կետը լրացվել է:

	հրատարակչություն և այլն) իրավահարաբերությունները՝ իրավասություններ, իրավունքներ և պարտականություններ:	Նույն հոդվածը լրացվել է նոր 6-րդ կետով
	8. Ամրագրել նաև ՀՀ ԳԱԱ կառավարման մարմինների ընտրության և լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ դրույթներ:	Չի ընդունվել քանի որ այս գաղափարը հավաքական ձևով արտահայտված է 24-րդ հոդվածում (25-րդ հոդված)
	9. ՀՀ ԱԺ ՀՅԴ խմբակցության մի խումբ պատգամավորների կողմից շրջանառության մեջ դրած «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Եկամտահարկի մասին», «Ավելացված արժեքի մասին», ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերում «Ազգային ակադեմիայի մասին» օրենքի նախագծում կամ ներառել որպես օրենսդրական փաթեթի մասեր:	Չի ընդունվել §Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին¦ ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Պ-745) ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության բացասական եզրակացությունը 04.12.09թ. 01/10.1/8934-09 գրությամբ ներկայացվել է ՀՀ ԱԺ: ՀՀ ԱԺ-ի IV գումարման 8-րդ նստաշրջանի օրակարգում դրա ընդգրկվելը 06.12.10թ. մերժվել է: «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-746) և Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-744) ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ կառավարությանը դիրքորոշումը 25.11.09թ. 01/10.1/8423-09 և 01/10.1/8421-09 գրություններով ներկայացվել է ԱԺ:
Ազգային ժողովի պատգամավոր Ա. Զաքարյան	1.«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» (Կ-910-20.05.2010-ԳԿ-010/1) առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ օրենքի նախագծի 1-ին գլխի հոդված 8-ի «ՀՀ ԳԱԱ գործունեության հիմնական ուղղություններն են» բաժնի 2-րդ կետում «խորհուրդների» բառից հետո ավելացնել «փորձագիտական խմբերի» բառակապակցությունը:	Ընդունվել է (9-րդ հոդված)
	2. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» (Կ-910-20.05.2010-ԳԿ-010/1) առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ օրենքի նախագծի 1-ին գլխի հոդված 8-ի «ՀՀ ԳԱԱ գործունեության հիմնական ուղղություններն են» բաժնի 3-րդ կետը շարադրել հետևյալ կերպ. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության կատարելագործմանն առնչվող օրենսդրության վերաբերյալ սահմանված կարգով ՀՀ կառավարությանը առաջարկությունների ներկայացումը.»	Ընդունվել է 8-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը խմբագրվել է (9-րդ հոդված)
	3. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» (Կ-910-20.05.2010-ԳԿ-010/1) առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ օրենքի նախագծի 1-ին	Ընդունվել է (9-րդ հոդված)

	գլխի հոդված 8-ի «ՀՀ ԳԱԱ գործունեության հիմնական ուղղություններն են» բաժնի 12-րդ կետում « օրենքի սահմաններում» բառակապակցությունը փոխարինել «օրենքով սահմանված կարգով» բառակապակցությամբ:	
	4. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» (Կ-910-20.05.2010-ԳԿ-010/1) առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ օրենքի նախագծի 1-ին գլխի հոդված 8-ի «ՀՀ ԳԱԱ գործունեության հիմնական ուղղություններն են» բաժնի 14-րդ կետում «խորհրդակցությունների» բառից հետո ավելացնել «կազմակերպումը և » բառակապակցությունը , իսկ «այդպիսի» բառը փոխարինել «նմանատիպ այլ» բառերով:	Ընդունվել է (9-րդ հոդված)
	5. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» (Կ-910-20.05.2010-ԳԿ-010/1) առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ օրենքի նախագծի 3-րդ գլխի հոդված 17-ի 4-րդ կետում «ժամանակով» բառից հետո դնել վերջակետ, հանել՝ «ոչ ավել քան երկու անգամ անընդմեջ» բառակապակցությունը, փոխարենը ավելացնել՝ « նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ակադեմիայի նախագահ» նախադասությունը:	Ընդունվել է (17-րդ հոդված)
Ազգային ժողովի պատգամավոր Ա.Մելիքյան	1.Առաջարկում եմ «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 2-րդ հոդվածում սահմանել Գիտությունների ազգային ակադեմիայի կարգավիճակը՝ որպես կառավարությանն առընթեր պետական մարմին և դրանից բխող փոփոխություններ կատարել նախագծի այլ հոդվածներում, քանի որ նախագծի վերլուծությունից հետևում է, որ ԳԱԱ-ն լինելով ոչ առևտրային կազմակերպություն, պետք է կառավարի և համակարգի կառավարության կողմից հիմնադրված պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը, ինչը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» և ՀՀ այլ օրենքների պահանջներին :	Չի ընդունվել քանի որ օրենքի ողջ գաղափարախոսությունը ելնում է ՀՀ ԳԱԱ-ի ոչ առևտրային կազմակերպություն լինելու փաստից
	2.Նախագծի 16-րդ հոդվածի 4-րդ մասում «արտասահմանյան անդամներ» բառակապակցությունից հետո լրացնել «ինչպես նաև ՀՀ ԳԱԱ պատվավոր	Չի ընդունվել քանի որ, որպես կանոն ՀՀ ԳԱԱ-ի պատվավոր դոկտորներ են ընտրվում հիմնականում

	դոկտորները» բառերով:	արտասահմանյան ճանաչված հասարակական և պետական գործիչները, որոնք իրենց գործունեությամբ նպաստում են ՀՀ ԳԱԱ-ի աշխատանքներին
	3. Նախագծի 17-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ՀՀ ԳԱԱ-ի նախագահը ընտրվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների թվից՝ ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի կողմից, փակ գաղտնի քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ 5 տարի ժամանակով, ոչ ավել քան երկու անգամ անընդմեջ»:	Չի ընդունվել սակայն 17-րդ հոդվածի 5-րդ (4-րդ) մասը խմբագրվել է (18-րդ հոդված)
	4. Նախագծի 19-րդ հոդվածի 3-րդ մասում «որոշման» բառից հետո լրացնել «օրենքով սահմանված կարգով» բառերով:	Չի ընդունվել 19-րդ հոդվածի 3-րդ մասը հանվել է
	5. Նախագծի 22-րդ հոդվածի 4-րդ մասը հստակեցման կարիք ունի, քանի որ պետական բյուջեի միջոցների հատկացումը ԳԱԱ-ի համակարգում ներառված պետական ոչ առևտրային կազմակերպություններին իրականացվում է միջնորդավորված ձևով՝ ԳԱԱ-ի միջոցով, ինչը չի բխում «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներից:	Չի ընդունվել քանի որ այս դրույթը օրենքի հիմնաքարերից մեկն է և բխում է ՀՀ ԳԱԱ-ի հատուկ կարգավիճակի առանձնահատկություններից:
	6. Նախագծի 22-րդ հոդվածի 3-րդ և 18-րդ հոդվածի 6-րդ մասերի միջև առկա է հակասություն, քանի որ սահմանվում են տարբեր իրավակարգավորումներ աշխատողների թվի կամ հաստիքացուցակի մասով:	Ընդունվել է 18-րդ հոդվածի 6-րդ կետը հանվել է
	7. Նախագծի 23-րդ հոդվածը հանել, քանի որ նման հարաբերությունները արդեն կարգավորված են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով:	Չի ընդունվել քանի որ ՀՀ ԳԱԱ-ն ըստ այս օրենքի եզակի ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնավորված է «ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի» 51-րդ հոդվածի 4-րդ կետով
	8. Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մասը հանել, քանի որ ԳԱԱ-ն դատական կարգով չի կարող վերակազմակերպվել, որովհետև դատական կարգով միայն լուծարվում են:	Ընդունվել է 24-րդ հոդվածի 2-րդ մասը հանվել է (25-րդ հոդված)
	9. Ի նկատի ունենալով այն, որ ՀՀ օրենսդրության մեջ բացակայում է «գիտական տիտղոս» հասկացության սահմանումը, սույն նախագծի շրջանակում առաջարկում եմ	Ընդունվել է Սահմանված է 2-րդ հոդվածում

	ամրագրել «գիտական տիտղոս»–ի հետ կապված իրավակարգավորումները:	
Ազգային ժողովի պատգամավոր Հ.Բիշարյան	1. Օրենքի նախագծում բացակայում է «Հիմնական հասկացություններ» հոդվածը: Մասնավորապես, անհրաժեշտ է այս գլխում սահմանել «ակադեմիկոս», «թղթակից անդամ», «ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ», «արտասահմանյան անդամ», «ՀՀ ԳԱԱ-ի բաժանմունք», «ՀՀ ԳԱԱ-ի աշխատակազմ», «ՀՀ ԳԱԱ նախագահություն», «ՀՀ ԳԱԱ նախագահ», «պատվովճար» և այլ նմանատիպ հասկացություններ, որոնք լույս կսփռեն օրենքում արծածվող վերոգրյալ անձանց և կառուցվածքային ստորաբաժանումների ով կամ ինչ լինելու, նրանց կատարած դերի ու նշանակության առումով:	Ընդունվել է Նախագիծը լրացվել է նոր 2-րդ հոդվածով «Հիմնական հասկացություններ» վերնագրով
	2. Նախագծի 2-րդ, նաև 7-րդ /մաս 2, 5/ հոդվածներով նախատեսված է, որ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան կազմակերպում, իրականացնում և համակարգում է գիտելիքի վրա հիմնված՝ տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման համար անհրաժեշտ հիմնարար և կիրառական հետազոտություններ: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ նմանատիպ գործառույթներ, մասնավորապես վերոգրյալ հետազոտությունների կազմակերպման և համակարգման առումով, իրականացնում է ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեն:	Չի ընդունվել Քանի որ ՀՀ ԳԿՆ և Գիտպետկոմի իրավասությունների մեջ են մտնում գիտատեխնիկական քաղաքկանության մշակումն ու իրականացումը, պետ.պատվերի տեղադրումն ու ֆինանսավորումը, մինչդեռ ՀՀ ԳԱԱ-ի համակարգի խնդիրը հիմնարար գիտության բնագավառում գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումն է, ինչպես նաև հանրապետությունում դրանց համակարգումը
	3. Նախագծի 3-րդ հոդվածը, որը սահմանում է ԳԱԱ հատուկ կարգավիճակը և նրա անմիջական ենթակայությունը ՀՀ կառավարությանը, նույնպես որոշակիորեն հակասում է ՀՀ ԿԳ նախարարության և նրա կազմում գործող Գիտության պետական կոմիտեի իրավասությանը գիտության ոլորտում: Արդյունքում ստացվում է, որ ՀՀ-ում գիտության ռազմավարության մշակմամբ և համակարգմամբ կարող են զբաղվել երկու կառույց՝ ՀՀ ԳԱԱ և ՀՀ ԿԳՆ-ը:	Չի ընդունվել քանի որ հենց դրանով է պայմանավորված, իր տեսակի մեջ եզակի, ՀՀ ԳԱԱ-ի հատուկ կարգավիճակի առանձնահատկությունը, որ նա հանդիսանում է ՀՀ կառավարության պաշտոնական խորհրդատուն՝ դրանից բխող գործառույթներով:
	4. Խմբագրական շտկումներ պետք է կատարել 2-րդ	Ընդունվել է հոդված 2-ի 7-րդ կետից հանվել է «կառավարման

	հոդվածի 7-րդ մասում՝ օգտագործելով առավել ընդունված եզրույթներ ֆինանսական միջոցների և դրանք տրամադրող գերատեսչության առումով:	մարմնի կողմից ֆինանսների նախարարություն ներկայացվող ֆինանսական փաստաթղթերում» բառակապակցությունը:
	5. Նախագծի 2-րդ հոդվածի 8-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել, թե ում կողմից պետք է սահմանվի «գործող կարգը»;	Չի ընդունվել (3-րդ հոդված)
	6. 6. Նախագծի 2-րդ հոդվածի 11-րդ մասը տեղափոխել 8-րդ հոդված:	Չի ընդունվել Հոդվածը 11-րդ մաս չունի
	7. Եթե օրենքով արդեն իսկ սահմանվում է ՀՀ ԳԱԱ-ի անվանումը /ողջ օրենքը նվիրված է այդ անվանումը կրող հիմնարկին/, ապա հիմնադիրը չի կարող այլ անվանում սահմանել: Այս առումով անհրաժեշտ է վերանայել նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասը:	Ընդունվել է հանվել են 5-րդ հոդվածի 2-րդ կետը խմբագրվել է
	8. Ոչ առևտրային կազմակերպությունները չեն կարող հետապնդել շահույթ ստանալու նպատակներ: Այդ իմաստով անհրաժեշտ է վերանայել ՀՀ ԳԱԱ-ի կողմից շահույթ ստանալու և այն օգտագործելու հնարավորությունը: Հարկ է նշել, որ նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ ՀՀ ԳԱԱ-ն ստեղծում է պետությունը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ ՀՀ ԳԱԱ-ն ոչ առևտրային կազմակերպություն է /բացակայում է «պետական» բառը/, ինչը լրացուցիչ շտկման կարիք ունի:	Չի ընդունվել ՀՀ ԳԱԱ-ն շահույթ չհետապնդող հատուկ տեսակի կազմակերպություն է, որը ամրագրվում է սույն օրենքով:
	9. Տեքստում առկա են բազմաթիվ տպագրական վրիպակներ, իսկ տեքստի որոշ հատվածներ կարիք ունեն էական խմբագրումների: Մասնավորապես, Օրենքի նախագծում անհրաժեշտ է նախատեսել հետևյալ գլուխները՝ հետևյալ ձևակերպումներով. «Ընդհանուր դրույթներ», «ՀՀ ԳԱԱ համակարգը», «ՀՀ ԳԱԱ կառավարումը», «ՀՀ ԳԱԱ հա-	Ընդունվել է Նախագիծը խմբագրվել է

	մակարգի սուբյեկտները, իրավունքները և պարտա-կանությունները», «ՀՀ ԳԱԱ գործունեության տնտեսական հիմքերը», «Եզրափակիչ և անցումային դրույթներ»: Այդ իմաստով անհրաժեշտ կլինի փոփոխությունների և լրացումների ենթարկել նախագծի ողջ կառուցվածքը:	
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ա.Բախշյան	1. Ճշտել, թե ՀՀ գիտության մեջ ինչ դերակատարում ունեն ՀՀ ակադեմիկոսները: Իսկ դա հասկանալու համար պետք է ուսումնասիրել, թե ինչպես են տեղի ունենում ՀՀ ԳԱԱ-ի անդամների ու թղթ.–անդամների ընտրությունները, կամ էլ պարզել, թե ՀՀ ԳԱԱ-ն ինչ չափորոշիչներից ելնելով է շնորհում ակադեմիական գիտական տիտղոս, որն իր հետ բերում է հսկայական ծախսեր՝ չունենալով ամրագրված չափորոշիչներ այդ մարդկանց ցմահ աշխատավարձ ապահովելու նպատակով:	Օրենքում նշված է որ, ՀՀ ԳԱԱ-ի իսկական և թղթակից անդամները գիտության և տեխնիկայի առաջատար մասնագետներ են, և կարող են աշխատել գիտահետազոտական կազմակերպություններում, ԲՈՒՀ-երում, ճյուղային գիտատեխնիկական կազ-մակերպություններում, որպես տնօրեններ, գիտատեխնիկական ստորաբաժանմունքների և ծրագրերի ղեկավարներ, ինչպես նաև դասախոսներ
	2. 1991 թվականից սկսած մեր գիտության ապագայի մասին հնչող լուրջ մտահոգությունները չեն ստացել անհրաժեշտ լուծումներ, ընդհակառակը անկախության 19 տարիների ընթացքում երկրում ժամանակակից գիտատեխնիկական քաղաքականություն չիրականացնելու հետևանքով, չեն ստեղծվել միջազգային գիտաուսումնակիրառական կենտրոններ գիտության բնագավառը սպառողականից շահութաբեր դարձնելու համար:	ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսների և թղթակից անդամների ընտրությունները կատարվում են ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության 36-րդ հոդվածի պահանջների համաձայն: ՀՀ ԳԱԱ անդամները գիտական հանրությանը ծանոթ են իրենց միջազգային ամենաբարձր չափանիշներին բավարարող արդյունքներով: